

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռախոս: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քհն. Մելիքյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Մեպտեմբերի 16, 2008թ.

**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց
Սրբալույս Մյուռնի ծաղկանց նյութերի օրհնությունը և սկսվեց Մյուռնի եփումը**

Մեպտեմբերի 14-ին՝ Խաչվերացի տոնի երեկոյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ անդաստանի արարողություն, որին հաջորդեց Սրբալույս Մյուռնի ծաղկանց նյութերի օրհնությունը:

Հոգևորականների հանդիսավոր թափորը՝ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ և բազմաթիվ հավատացյալների ուղեկցությամբ, դուրս գալով Մայր Տաճարից, պատվեց նրա շուրջը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը, վարդաջուր ցողվեց հավատացյալ հայորդիների վրա՝ իբրև նշան օրհնության:

Այնուհետև թափորն ուղղվեց դեպի Հին Վեհարանի բակը, որտեղ կատարվելու էր Սբ. Մյուռնի ծաղկանց նյութերի օրհնությունը և սկսվելու էր եփումը: Ընթացվածքներից և աղոթքներից հետո, հոգեզմայլ շարականների երգեցողության ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարվեց Մյուռնի բաղադրիչ նյութերի օրհնությունը, որից հետո դրանք միախառնվեցին կաթսայի մեջ ու սկսվեց եռօրյա եփումը:

Արարողության ավարտին ներկաներին իր Հայրապետական պատգամն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ կոչ անելով ամենքին հարատև աղոթելու և հայցելու, որ Տերը Սուրբ Հոգու շնորհները հեղի Սրբալույս Մյուռնի մեջ և հրաշագործ գործությամբ օժտի այն, որպեսզի այդ յուրի դրոշմումով հայորդիները մաքրվեն բոլոր տեսակի մեղքերից, և սրբությունը լինի զարդը նրանց անձերի:

Մյուռնի նյութերի եփման ողջ ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները սաղմոսերգությամբ անդադար հսկելու են կաթսայի մոտ:

###